371.212. 73 *https://orcid.org/0009-0006-4162-0996*
DOI:10.46991/ai.2023.1.102

THE FACTORS ENDANGERING THE SOCIALIZATION PROCESS OF JUNIOR SCHOOLCHILDREN

Haroyan Liza
Vanadzor State University
lizaharoyan@gmail.com
Haroyan Alina
Shirak region, Artik city, school №5

Summary

The factors endangering the socialization process of junior schoolchildren emerge from the very first days of school life, Tutoring is one of the obvious dangers, on which the main emphasis is put in this article, It is obvious that the tutor cannot create the social environment and learning setting that is necessary for the effective socialization of a child, so the phenomenon of tutoring is one of the main reasons of education crisis, especially if it is universal. One of the factors hindering the socialization of junior schoolchildren is the fear of the teacher and assessment, which are psychological conditions that accompany the child every day and eventually turn into psychological complexes, significantly hindering his/her socialization. The role and significance of family as a core or small model of society are irreplaceable in terms of forming the social skills of junior schoolchildren. First, the junior schoolchildren learn the major part of the rules of social behaviour at home and then they continue that process at school. Unfortunately, in recent years, there has been a significant shortage of nuclear families in our country. Some fathers and mothers live abroad. Homework has become one of the main factors that endanger the process of socialization of junior schoolchildren. The schoolchildren strengthen the knowledge that they gain at school by doing their homework. In this way, they apply their knowledge in practice. Nowadays, the junior schoolchildren and their parents complain that the homework assigned by the teachers is really difficult. We also touch upon other factors that endanger the socialization process of junior schoolchildren in the article.

Keywords: socialization, primary school, system, tutoring, educational process, tutor, social process, behaviour change.

ФАКТОРЫ, УГРОЖАЮЩИЕ ПРОЦЕССУ СОЦИАЛИЗАЦИИ МЛАДШИХ ШКОЛЬНИКОВ

Ароян Лиза
Канд.педагогических наук, доцент
Ванадзорский государственный университет
lizaharoyan@gmail.com
Ароян Алина
Ширакский регион, город Артик, школа номер 5

Аннотация

Факторы, угрожающие процессу социализации младших школьников, проявляются с самых первых дней школьной жизни. Одной из очевидных опасностей, на которые в данной статье делается основной акцент, является репетиторство. Очевидно, что репетитор не может создать социальную среду и условия обучения, необходимые для эффективной социализации ребенка, поэтому феномен репетиторства является одной из основных причин кризиса в образовании, особенно если он универсален. Одним из факторов, препятствующих социализации младших школьников, является страх перед учителем и оценка, которые представляют собой психологические условия, которые сопровождают ребенка каждый день и в конечном итоге превращаются в психологические комплексы, значительно препятствующие его / ее социализации. Роль и значение семьи как основной или малой модели общества незаменимы с точки зрения формирования социальных навыков у младших школьников. Сначала ученики младших классов изучают основную часть правил социального поведения дома, а затем продолжают этот процесс в школе. К сожалению, в последние годы в нашей стране наблюдается значительный дефицит ядерных семей. Некоторые отцы и матери живут за границей. Домашняя работа стала одним из главных факторов, который ставит под угрозу процесс социализации учеников младших классов. Школьники укрепляют знания, которые они получают в школе, выполняя домашнюю работу. Таким образом, они применяли свои знания на практике.

В настоящее время младшие школьники и их родители жалуются, что домашнее задание, задаваемое учителями, действительно сложное.

В этой статье мы также затрагиваем другие факторы, которые ставят под угрозу процесс социализации младших школьников.

Ключевые слова: социализация, начальная школа, система, репетиторство, учебный процесс, воспитатель, социальный процесс, изменение поведения.

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՎՏԱՆԳՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Հարոյան Լիզա
մանկ. գիտ. թեկն., դոցենտ
Վանաձորի պետական համալսարան
lizaharoyan@gmail.com
Հարոյան Ալինա
Շիրակի մարզ, քաղաք Արթիկ, թիվ 5 դպրոց

Համառոտ ներածական: ՀՀ կրթության համակարգը վերջին տարիներին օբյեկտիվ ու սուբյեկտիվ բազմաթիվ պատճառներով գտնվում է տևական ճգնաժամային վիճակում: Համակարգում անհրաժեշտ են արմատական փոփոխություններ: Մասնավորապես հարկ կա այնպիսի քայլեր ձեռնարկելու, որոնք տարրական դպրոցը և ընդհանրապես հանրակրթությունը կձերբազատեն մի շարք բացասական երևույթներից ու ազդեցություններից:

Տարրական դպրոցը կրթության հիմքն է, և երեխայի իրական կյանքի բնականոն զարգացման դպրոցն է: Բայց դպրոցական ներկայիս ծրագրերը և դրանց հիման վրա կազմված դասագրքերը կրտսեր տարիքի զարգացմանը համապատասխան ընդունակություններ զարգացնելու տեղ ու ժամանակ չեն թողնում:

Կրթության ոլորտի բարեփոխումների հիմնական ուղղություններից մեկն էլ նոր դարաշրջանի աշակերտի անհատականության բացահայտումն է, անձի զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը: Մանկավարժների առջև խնդիր է դրված՝ նորովի բացահայտելու ուսման կրթության որակի բարձրացման պայմաններն ու միջոցները, որտեղ ոչ պակաս նշանակություն ունեն ուսումնական մոտիվացիայի ձևավորումն ու զարգացումը:

Հանրակրթական դպրոցը կկայանա, եթե ունենանք կայացած տարրական դպրոց: Ներկայումս կրթության ու դաստիարակության գործընթացը, ուսումնական աշխատանքի կազմակերպման ձևերն ու մեթոդները դուրս են մնացել ուսումնական հաստատությունների մասնագիտական գործառութային շրջանակից և տեղափոխվել համակարգից դուրս՝ հայտնվելով ամենից առաջ մասնավոր պարապող կրկնուսույցների ձեռքում: ՀՀ-ում ինչպես նախկինում, այնպես էլ հիմա ծաղկում է կրկնուսույցների ինստիտուտը:

Բանալի բառեր: Տարրական դպրոց, համակարգ, ուսումնական գործընթաց, կրկնուսույց, փոփոխվող վարքագիծ:

Հիմնախնդիր: Կրտսեր դպրոցականների սոցիալականացման գործընթացը վտանգող գործոններն ի հայտ են գալիս դպրոցական կյանքի առաջին իսկ օրերից: Ուսումնասիրության հիմնախնդիրն է բացահայտել՝ սոցիալական որ գործոններն են ազդում ուսումնական մոտիվացիայի ձևավորման վրա և չառաջադիմելու պատճառ դառնում:

Հիմնախնդրին առնչվող արդիական այլ հետազոտությունների և հրատարակությունների կարճ վերլուծություն: Հիմնախնդրին անդրադարձել են տարբեր գիտնականներ իրենց հետազոտություններում (Վ. Ս. Մուխինան գրում է. «Անձի սոցիալականացման գործընթացում առկա են նույնականացում, մեկուսացում»):

Հիմնախնդրին առնչվող մտքեր, տեսակետներ են արտահայտել Տ. Ա. Ասատրյանը [Երևան, 2015), Ն. Վ. Պողոսյանը (Երևան, 2015):

Հոդվածի շրջանակում իրականացվող հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է բացահայտել, տեսականորեն հիմնավորել կրտսեր դպրոցականների սոցիալականացման գործընթացը վտանգող գործոնները և աշակերտների չառաջադիմելու հիմնախնդիրը տարրական դասարաններում:

Հետազոտության նորույթը: Ուսումնական մոտիվացիայի հիմքերը դրվում են հենց կրտսեր դպրոցական տարիքում: Միևնույն ժամանակ անժխտելի է այն փաստը, որ կրտսեր դպրոցական տարիքի վերջում զանգվածային է դառնում աշակերտության անտարբերությունը, ինչու չէ՝ նաև բացասական վերաբերմունքը ուսման նկատմամբ: Անհրաժեշտություն է առաջանում բացահայտել՝ սոցիալական որ գործոններն են ազդում ուսումնական մոտիվացիայի ձևավորման վրա, իսկ այդ գործում իրենց անփոխարինելի դերն ունեն ինչպես ուսուցիչները, այնպես էլ ծնողները:

Հիմնական նյութի շարադրանքը: 21-րդ դարը տեխնոլոգիական աննախադեպ առաջընթացի, գերարագ տեղեկատվության և սոցիալական կապերի զարգացման ժամանակաշրջան է: Աճող սերունդը պետք է կարողանա հնարավորինս արագ և արդյունավետորեն հարմարվել կյանքի նոր ռիթմերին, դիմակայել նոր մարտահրավերներին: Ժամանակի թելադրանքով փոխվել են նոր սերնդի ընդհանուր պահանջմունքային հարացույցն ու ոլորտները, իսկ տարիքային զարգացման յուրաքանչյուր փուլում առաջանում են նաև յուրահատուկ անհատական պահանջմունքներ, որոնց բավարարումը ենթադրում է, որ հոգեբանամանկավարժական գիտությունները պետք է նորովի ու ժամանակակից պահանջներին համահունչ կազմակերպեն կրթության ու դաստիարակության գործընթացը:

Հանրակրթական դպրոցը մի ամբողջական համակարգ է, որտեղ իրականացվում է անձի համակողմանի զարգացումը 6-18 տարեկան հասակում: Ուսումնական գործընթացի գլխավոր հիմնախնդիրը, մասնավորապես կրտսեր դպրոցականների կրթության ոլորտում, ուսուցման արդիականացումն է, 6 տարեկան երեխաների ուսուցման գործընթացի կազմակերպումն այնպես, որ նրանք ոչ թե ստանան պատրաստի գիտելիքներ, այլ կարողանան դրանք ինքնուրույն «հայտնագործել»: Ուսուցիչն ուսուցումը ճիշտ կառավարելու համար պետք է իմանա այն պահանջները, որոնք հասունացել են մեր օրերի համար:

Գիտելիքները ձեռք են բերվում կյանքում կիրառվելու համար, որպեսզի կրթական գործընթացում բարոյական արժեքներով, համոզմունքներով ձևավորված մարդը նրանցով ղեկավարվի սոցիալական միջավայրում՝ իր ամբողջ կյանքի ընթացքում:

Վերակառուցվող հանրակրթական դպրոցի համար կարևորը ոչ միայն ուսուցման և դաստիարակության բնագավառում նոր փոփոխություններն են, ոչ միայն նոր ծրագրերի ու դասագրքերի ստեղծումն է, որոնք կբավարարեն արդի կրթական պահանջները, այլև դասավանդման մեթոդների ու ձևերի կատարելագործումը, որով հնարավոր կլինի բավարարել 21-րդ դարի դպրոցականի հոգևոր, մտավոր ու ֆիզիկական պահանջմունքները, նրա օրավուր աճող հետաքրքրություններն ու հարցասիրությունը: Ուսուցման մեթոդական կատարելագործումը ենթադրում է աշակերտների ստեղծա-

գործական ինքնուրույնության, տրամաբանական մտածողության զարգացում, ճանաչողական ակտիվության բարձրացում, իսկ այս բոլորի հիմքերը դրվում են տարրական դպրոցում:

«Տարրական դպրոցը կրթության հիմքն է,– գրում է Ուշինսկին,– այնտեղ աշխատելը ավելի բարդ է ու դժվար, քան միջնակարգ դպրոցի բարձր դասարաններում» [1, 188]: Հանրակրթական դպրոցը կկայանա, եթե ունենանք կայացած տարրական դպրոց: Սակայն հարկ է արձանագրել, որ ՀՀ կրթության համակարգը վերջին տարիներին օբյեկտիվ ու սուբյեկտիվ բազմաթիվ պատճառներով չի կայունանում. գտնվում է ճգնաժամային վիճակում: Համակարգում անհրաժեշտ են արմատական փոփոխություններ: Մասնավորապես հարկ կա այնպիսի քայլեր ձեռնարկելու, որոնք տարրական դպրոցը, ընդհանրապես հանրակրթությունը կձերբազատեն մի շարք բացասական երևույթներից ու ազդեցություններից: Վերջիններից մեկն այն է, որ կրթության ու դաստիարակության գործընթացը, ուսումնական աշխատանքի կազմակերպչական ձևերն ու մեթոդները դուրս են մնացել ուսումնական հաստատությունների մասնագիտական գործառութային շրջանակից և տեղափոխվել համակարգից դուրս՝ հայտնվելով ամենից առաջ մասնավոր պարապող կրկնուսույցների ձեռքում: ՀՀ-ում, ինչպես նախկինում, այնպես էլ հիմա ծաղկում է կրկնուսույցների ինստիտուտը: Այսպես, կրթության համակարգի ներքին թերությունների ու գլոբալ բացթողումների հետևանքով ձևավորվել են արտահամակարգային կառույցներ, որոնք շահախնդիր մարդկանց միջոցով թափանցել են կրթական համակարգ՝ ներսից խարխլելով նրա առանց այդ էլ երերուն հիմքերը, վտանգելով հեղինակությունը:

Ավելին, կրթության ոլորտին ուղղված արտահամակարգային սպառնալիքները վաղուց ի վեր «օրինականացվել» են. ներկայումս նույնիսկ դպրոցների և բնակելի շենքերի շքամուտքերում, էլ չասած՝ թերթերում ու համացանցային կայքերում կարելի է կարդալ՝ «Կպարապեմ առանց տարիքային սահմանափակման», «Կպարապեմ բոլոր առարկաները», «Առաջին դասարանի աշակերտների դասապատրաստում»: Բազմաբնույթ այսօրինակ «Էստի համեցեք»-հայտարարությունները հաստատուն քայլերով տեղափոխվել են բարձրագույն կրթության համակարգ՝ «Կգրեմ կուրսային, ավարտական աշխատանք, մագիստրոսական թեզ» և այլն: Ե՛վ պարապում են, և՛ գրում են: Իսկ ի՞նչ են անում դպրոցն ու բուհը:

Անշուշտ, սխալ կլինի միանշանակ պնդել, թե այս համակարգերում բարձիթողի վիճակ է, և փորձ չի արվում շտկելու դրությունը: Կրթական ոլորտի պատասխանատու օղակներում մշակվում են նորարարական մեթոդիկաներ և տեխնոլոգիաներ՝ համակարգը կատարելագործելու, սովորողների ընդհանուր զարգացման մակարդակը բարձրացնելու, մտահորիզոնն ընդլայնելու, ինքնուրույնաբար գիտելիքներ ձեռք բերելու, արագ փոփոխվող իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու նրանց ունակությունների զարգացման, սոցիալականորեն լիարժեք անձի ձևավորման առումով: Պահանջներից ամենակարևորն է՝ ուսուցումը դարձնել գրավիչ, երեխային դարձնել ոչ թե ուսուցման օբյեկտ՝ գիտելիքի կրավորական կրող, այլ սուբյեկտ՝ այդ գիտելիքը ինքնուրույնաբար ձեռք բերող ու յուրացնող:

Հարկ է նկատել, որ կրտսեր դպրոցականների սոցիալականացման գործընթացը վտանգող գործոններն ի հայտ են գալիս դպրոցական կյանքի առաջին իսկ օրերից:

2006 թվականից սկսած՝ մեր երկրում դպրոց են հաճախում 6 տարին լրացած երեխաները: Ցավոք, բազում են դեպքերը, երբ դպրոց հաճախելուց մի քանի շաբաթ անց որոշ դասվարներ ծնողներին առաջարկում են՝ «Բերեք՝ պարապեմ, չի հասցնում»:

Դպրոցի շեմը նոր ոտք դրած երեխան, թե ինչը «չի հասցնում», մնում է անհասկանալի: Առավել անհասկանալի և անհանդուրժելի վիճակ է ստեղծվում, երբ կրկնուսույցի պատվավոր «թիկնոց» են հագնում թոշակառու ուսուցիչները և, որ առավել վտանգավոր է, միջակ ընդունակություններով բուհն ավարտած կամ նույնիսկ մանկավարժական կրթություն չունեցող անձինք:

Դպրոցական ուսուցման ու դաստիարակության գլխավոր նպատակը ոչ միայն գիտելիքներով հարուստ, այլ նաև բազմակողմանիորեն կրթված, հասարակությանը պիտանի և նրան խորապես ինտեգրված, զարգացման պատշաճ մակարդակ ունեցող անձի ձևավորումն է:

Դպրոցական կյանքի առաջին օրերից փոխվում է երեխայի դիրքորոշումը շրջապատող մարդկանց նկատմամբ, փոփոխությունների են ենթարկվում նրանց ընկալումներն ու պատկերացումները մարդկանց հետ փոխհարաբերությունների վերաբերյալ [2, 128-130]: Կրտսեր դպրոցականի համար սկսվում է նոր ու կարևոր տարիքային շրջան՝ ինքնագիտակցության, ինքնահաստատման շրջանը: Տարիքային մի փուլից մյուսին անցումը երեխային դնում է բոլորովին նոր դիրքում. այդ դիրքով են արդեն որոշվում երեխայի մյուս բոլոր սոցիալական հարաբերությունները ծնողների, մեծահասակների, հասակակիցների հետ: Ծագում են նոր պահանջներ ու պահանջմունքներ, նոր կանոններ՝ կապված նոր կենսադիրքի և նոր դերի կատարման հետ: Ապահովելու համար 6 տարեկան երեխայի սահուն անցումը ուսումնական գործընթաց, անհրաժեշտ է ուսումնառության առաջին իսկ օրերից ստեղծել ուսումնական բարենպաստ միջավայր: Առաջին մենակատարը, որի ձեռքին «ջութակն» է, երեխայի նուրբ հոգին ու դեռևս չհասունացած գիտակցությունը, ուսուցիչն է. այստեղ չի կարող որևէ տարակարծություն կամ տարընկալում լինել: Սակայն երեխային «հանձնելով» երկրորդ մենակատարի՝ տնային վարձովի ուսուցչի, կրկնուսույցի հոգածությանը, ծնողները մեծագույն սխալ են գործում, քանի որ երեխայի գիտակցության մեջ խամրում է այն նվիրական մարդու պատկերը, որին տրված է փոքրիկի կյանքի անփոխարինելի ու գլխավոր դերակատարը լինել

Ակնհայտ է, որ որևէ կրկնուսույց չի կարող ստեղծել այն սոցիալական միջավայրն ու կրթական տարածությունը ստեղծել, որոնք անհրաժեշտ են երեխայի արդյունավետ սոցիալականացման համար, հետևաբար կրկնուսուցման երևույթը կրթության ճգնաժամի խորքային դրսևորումներից մեկն է դառնում, հատկապես եթե կրում է համընդհանուր բնույթ: Պարզ է, որ երեխան ուսուցման բուն գործընթացներից դուրս էլ զարգանում է ամեն օր, զարգանում այնքան արագ, որ 6 տարեկան երեխայի կյանքի մեկ կամ երկու ամիսն ավելի շատ փոփոխություններ է բերում նրա ինտելեկտուալ կարողությունների և հոգևոր ու մարմնական զարգացման համար, քան հետագա տարիները: Ռուս հոգեբան-մանկավարժ Լ. Վիգոտսկին կարևորում էր երեխայի զարգացման հենց առաջին դպրոցական ամիսները՝ գտնելով, որ այդ ընթացքում նա աննախադեպ զարգացում է արձանագրում, բերում լուրջ հաջողություններ: Եվ այս ամենի համար անփոխարինելի սնուցող միջավայր գիտնականը համարում է դպրոցական միջավայրը, մինչդեռ որևէ դասապատրաստող կամ կրկնուսույց անկարող է ապահովել ուսումնական կոլեկտիվ միջավայր:

Կրտսեր դպրոցականների սոցիալականացման գործընթացը վտանգող գործոնները վերոնշյալով, սակայն, չեն սահմանափակվում: Նշենք դրանցից ևս մի քանիսը:

Վախը ուսուցչից: Որքան էլ ժամանակակից մանկավարժության դիտարկմամբ երեխանու ուսուցիչը կրթության հավասարազոր սուբյեկտներ են, այնուամենայնիվ

փաստ է, որ ուսուցիչ-երեխա հարաբերությունները չեն կարող կառուցվել միայն հորիզոնական հարաբերությունների սկզբունքով: Նույնիսկ հոգեբանական առումով է անխուսափելի, որ հարաբերությունների այդ կառուցվածքը հաճախ հենց ուղղահայաց բնույթ է ստանում, իսկ ուղղահայացի «վերևում», բնականաբար, ուսուցիչն է: Եթե նույնիսկ շատ էլ կամենանք, ուսուցիչը երեխայի համար մնում է որպես յուրատեսակ պահանջատեր: Երեխան անկողին է մտնում տագնապով՝ վաղն ի՞նչ կասի ուսուցիչը: Արդի մանկավարժությունն այդ հոգեբանական խորքային հարցի մի պատասխան ունի. երեխան դպրոցից դասերը յուրացրած պետք է գնա տուն այնպիսի վստահությամբ, թե ինքն արել է ամենակարևորը և ազատ ժամանակ ունի անհոգ խաղալու: Նա դասերի գերակշիռ մասն ու հանձնարարություններն արդեն արել է դպրոցում և տուն է գնում ուրախ, դրական հույզերով: Նա նաև հստակորեն գիտակցում է, որ դպրոցում պատրաստած լինելով մյուս օրվա դասերը՝ ինքը յուրօրինակ պարգև է տանում ծնողներին՝ վերջիններիս չծանրաբեռնելով իր ուսման խնդիրներով. ծնողը ազատագրվում է երեխայի ուսմանն առնչվող մշտապես հոգսաշատ ու պատասխանատու վիճակից:

Գնահատվելու վախը: Օբյեկտիվ ու արդարացի գնահատման խնդիրը մանկավարժական մեթոդաբանության կարևորագույն խնդիրներից է: Որքան էլ կատարելագործվում են գնահատման մանկավարժական գործիքակազմերը, ակնհայտ է, որ գնահատումը շարունակում է մնալ խնդրահարույց: Գնահատականը երբեք չպետք է դառնա սովորողի սևեռուն գաղափարը. այն պետք է օբյեկտիվորեն հաջորդի դպրոցականի կատարած աշխատանքին և ներդրած կրթական ջանքերին՝ որպես համարժեք վերաբերմունքի արձանագրում:

Կրտսեր դպրոցականների սոցիալականացման գործընթացներին չափազանց մեծ վնաս են հասցնում չհիմնավորված *թեստային առաջադրանքները*, հատկապես նրանք, որոնք միայն մեխանիկական հիշողություն են պահանջում: Գիտելիքի մեխանիկական սերտումը սովորողների համար դառնում է ինքնանպատակ, որի գործնական նշանակությունը խիստ փոքր է, իսկ գործնականում չկիրառվող գիտելիքը չի կարող լիարժեք կերպով իրացվել, հետևաբար մնում է վերջինիս գործընթացներից մեկուսացված:

Կրտսեր դպրոցականների սոցիալական հմտությունների ձևավորման առումով անփոխարինելի են հասարակության բջջի կամ փոքր մոդելի՝ ընտանիքի դերն ու նշանակությունը: Սոցիալական վարքի կանոնների մեծ մասը կրտսեր դպրոցականը նախ յուրացնում է ընտանիքում, ապա՝ շարունակում դպրոցում: Ցավոք, վերջին տարիներին մեր երկրում լիակազմ ընտանիքների պակասը զգալի է՝ բացակայում են հայրիկներ, նույնիսկ մայրիկներ: Ընտանիքում երեխայի վրա ազդում են ոչ միայն ծրագրավորված, նպատակաուղղված դաստիարակչական ներգործությունները, այլ նաև ծնողների վարքագծի առանձնահատկությունները [3, 121-122): Ընտանիքը երեխայի համար ստեղծում է սոցիալական վարքի որոշակի կաղապարներ: Իր գործողություններում երեխան առաջին հերթին հենվում է ծնողների հետ շփման փորձի վրա: Նախադպրոցականը կամ կրտսեր դպրոցականն ընդօրինակում և իր գործողություններում վերարտադրում է ծնողների վարքը: Ահա ինչու մանկավարժության դասականները ծնողներին հորդորում էին՝ տվե՛ք երեխային լավ օրինակ:»:

Բնականոն զարգացման հետագա տարիներին երեխան իր փոխհարաբերություններն այլ անձանց հետ կառուցում է՝ օգտագործելով ընտանեկան հաղորդակցման մոդելները: Ընտանիքում երեխաների սկզբնական սոցիալականացումը, հատկապես ծնող-երեխա հարաբերությունների ոլորտում, նմանատիպը չունի ռեֆերենտային

խմբերի այլ տեսակներում [4, 65]: Եթե նույնիսկ կրթության համակարգը լիներ կատարյալ, դարձյալ չէր կարող երեխայի համար ապահովել այն հատուկ հոգատարությունը ու սերը, որոնք կան ընտանիքում:

Դպրոցում ընդարձակվում է երեխայի սոցիալական հարաբերությունների շրջանակը, և ուսուցչի խնդիրն է նրա հետ տարվող մանկավարժական աշխատանքը դնել սոցիալականացման հիմքի վրա, սոցիալական կապերն ավելի ընդարձակելով՝ դպրոցը դարձնելով «ուրախության տուն», ինչպես բնորոշում էր Յա. Ա. Կոմենսկին:

Կրտսեր դպրոցականների սոցիալականացման գործընթացը վտանգող գործոն է դարձել այնպիսի կարևորագույն մանկավարժական միջոց, ինչպիսին տնային առաջադրանքն է՝ կոչված ամրապնդելու դպրոցում երեխայի ստացած գիտելիքները, դրանք կիրառելու գործնականում: Այսօր, սակայն, տնային առաջադրանքները բազմաթիվ դժվարություններ, դժգոհություններ են հարուցում կրտսեր դպրոցականների ու ծնողների շրջանում: Հարկ է արձանագրել, որ հանրակրթության ոլորտում այս հիմնախնդիրը սրվել է հատկապես վերջին տասնամյակներում, երբ խորհրդային «հին» դպրոցական կրթական սկզբունքներից ու ավանդույթներից փորձ արվեց ձերբազատվել՝ վերջինիս իբր պահպանողական, ոչ ազատական լինելու պատճառաբանությամբ: Սակայն «նոր» դպրոցը միանգամայն սխալ գնահատեց նոր սերնդի աքսելերացիայի աստիճանը, ինչի հետևանքով դպրոցում հանձնարարվող տնային առաջադրանքները բարդության աստիճանով բարձրացվեցին այնպիսի մակարդակի, որ դրանց կատարման ամենօրյա գործին ստիպված լծվեցին երեխայի ծնողները, հարազատները, նույնիսկ իրենք՝ ուսուցիչները: Ուստի բնավ զարմանալի չէ, որ այսօր ցանկացած ծնող նաև իր երեխայի դպրոցի «հեռակայող» սանն է:

Երեխաների տարիքին ոչ համապատասխան բարդացել են դպրոցական ծրագրերը, դասագրքերը դարձել են խրթին, նույնիսկ անընկալելի թե՛ երեխայի, թե՛ նաև ծնողների համար [տե՛ս 5]: Ցավալին այն է, որ ներկա ծրագրերով առանց ծնողի օգնության ոչ մի երեխա չի կարող սովորել մասնավորապես տարրական դասարաններում: Այս երևույթը հղի է բազմաթիվ բացասական հետևանքներով թե՛ մանկավարժական, թե՛ նաև հոգեբանական առումներով: Երեխայի մեջ ձևավորվում է անվստահություն սեփական ուժերի նկատմամբ, ազդում 6-9 տարեկանի ինքնազգացողության, առողջության, ֆիզիկական զարգացման վրա՝ դառնալով սովորելուց խուսափելու պատճառ, կլանելով երեխայի՝ աշխարհը ճանաչելու համար անհրաժեշտ ազատ ժամանակը: Կրտսեր դպրոցականի ինքնուրույնությունն ու ընդունակությունները զարգանում են ոչ միայն գրքերով ու պարապմունքներով, այլ նաև նրան շրջապատող սոցիալական միջավայրով, հասարակական ու բնական կյանքի երևույթներով, իրադարձություններով:

Կրտսեր դպրոցականների սոցիալականացման բնականոն գործընթացը խոչընդոտող գործոն է նաև այն, որ ուսուցիչներն հիմնականում կարևորում են երեխայի ուսումնական առաջադիմությունը. եթե նա լավ է սովորում, ուրեմն ամեն ինչ կարգին է. չգիտես ինչու, երկրորդական պլան են մղվում երեխայի մտավոր, հոգեբանական ու մշակութային զարգացման խնդիրները, որոնք պակաս կարևոր չեն երեխայի՝ որպես սոցիալական անձի լիարժեք ձևավորման առումով:

Ներկայումս կյանքը դպրոցին առաջադրվում են բոլորովին նոր պահանջներ՝ կրթության բովանդակությունն ու կառուցվածքը վերափոխելու անհրաժեշտության տեսանկյունից: Հանրակրթական դպրոցի շրջանավարտը պետք է ունենա ոչ մի*այն հիմնավոր գիտելիքներ, այլն այդ գիտելիքները կյանքում կիրառելու հմտություն, պետք*

Է ունենա նաև բարոյա-քաղաքացիական որոշակի համոզմունքներ, պատրաստ լինի կյանքին ու աշխատանքին: Որոշակի փոփոխություններ պետք է մտցվեն ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններում: Փոխվել են ժամանակները, փոխվել է աշակերտի անհատականությունը. նա դարձել է ավելի ընկալունակ, շրջահայաց ու հետաքրքրասեր: Տեղեկատվական հեղեղը, գիտատեխնիկական առաջընթացը նպաստում են նրա համակողմանի զարգացմանը: Փոխվել են նաև երեխայի հետ տարվող ուսումնական աշխատանքի ձևերն ու մեթոդները. դրանք ավելի կատարելագործվել են, բարդացել: Սակայն, ինչպես արդեն նշել ենք, ժամանակակից դպրոցի համար շարունակում է որպես սպառնալիք մնալ կրկնուսուցման երևույթը, աշակերտների ստեղծագործական մտածողության զարգացման համար շարունակում են որպես վտանգ ներկայանալ թեստային առաջադրանքները: Թերևս դրանք են հիմնական պատճառները, որ դասավանդման արդի դրվածքը չի նպաստում ուսման նկատմամբ կրտսեր դպրոցականների հետաքրքրության զարգացմանը:

Կրտսեր դպրոցական տարիքում ֆիզիկական զարգացումն ու ուսումնական աշխատանքն ընթանում են համաքայլ. երեխայի ներդաշնակ զարգացման գործում ամեն ինչ գտնվում է փոխադարձ կապի մեջ: Երեխայի առողջությունը կախված է այն բանից, թե ինչպիսի ուսումնական աշխատանքներ են տրվում երեխային, ինչպես և երբ է նա կատարում տնային առաջադրանքները: Եթե երեխան տնային առաջադրանքը կատարում է հարկադրաբար, հակառակ իր ցանկության (շատ հաճախ այդպես է լինում), ապա դա ճնշում է երեխայի հոգևոր զարգացման գործընթացը՝ անդրադառնալով նրա տրամադրության, ֆիզիկական բնականոն աճի վրա:

Ուստի, որպես եզրահանգում ամբողջ վերոգրյալի, արձանագրում ենք, որ նպատակահարմար է, եթե կրտսեր դպրոցականը բոլոր դասերը սովորում է դասարանում ուսուցիչների հսկողության ու ղեկավարության ներքո: Նման մոտեցումն ունի մի շարք հիմնավորումներ.

- Դպրոցում ղեկավարելով աշակերտին՝ ուսուցիչը տեսնում է, թե նա ինչպես է ինքնուրույն կերպով պատրաստվում և կատարում առաջադրանքը, ինչպես օգնել նրան, ինչպես սովորել սովորեցնել:
- Հետևելով ու ղեկավարելով դասը պատրաստող երեխային՝ ուսուցիչը ուսումնասիրում է նրան, նկատում, թե ինչն է նա հեշտ յուրացնում, ինչը դժվար, կանխում է սխալները: Կրտսեր դպրոցականի ուշադրությունն առարկայական է, նա հաճախ անգիր է անում առանց իմաստը հասկանալու, ուստի պետք է օգնել նրան հաղթահարելու ձևականությունը, ինչն ի զորու է անելու գլխավորապես ուսուցիչը: «Երեխան սովորում է սովորել ուսուցչի ղեկավարությամբ, իսկ դա նախնական ուսուցման ժամանակ ավելի կարևոր է, քան ինքը՝ ուսումը»,– ասում է Կ. Դ. Ուշինսկին [1, 171]:
- Դպրոցում դասը յուրացրած երեխան տուն է գնում՝ տնօրինելու իր ազատ ժամանակը, չկտրվելով սիրելի խաղից, զարգանալով ընտանիքում բնության ու իրեն շրջապատող մարդկանց ազդեցության ներքո:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ուշինսկի Կ. Դ., Մանկավարժական ընտիր երկեր, 1 հ., էջ 170, 1959:
2. Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Վեց տարեկան դպրոցականների ուսուցումը, Երևան, 2006:

3 Պետրովսկի Ա. Վ., Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Երևան, «Լույս», 1977:

4. Պետրոսյան Հ. Հ., Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2012:

5. Մայրենի 2-րդ դասարան, մաս 2, Երևան, 2019:

6. Տարրական դասարանների առարկայական ծրագրեր, 1-4 դասարանների դասագրքեր:

Получено: 28. 03. 2023 *Received: 28. 03. 2023*
Рассмотрено: 03. 04. 2023 *Reviewed: 03. 04. 2023*
Принято: 20. 04. 2023 *Accepted: 20. 04. 2023*

Journal ''Education in the 21st Century'', Vol1-9/1/, 2023

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Comercial 4.0 International License

378(479.25) *https://orcid.org/0000-0002-8328-762X* **DOI:10.46991/ai.2023.1.110**

ON THE ISSUE OF RAISING THE EFFICIENCY OF HIGHER EDUCATION IN ARMENIA

Susanna Anguryan
PhD, Associate Professor
European University of Armenia
susanna.anguyan@mail.ru

Summary

This article puts forward some recommendations to improve the quality of the content of vocational education, modernize teaching methods, approaches and techniques in universities and increase the effectiveness of control in Armenian universities. As a rule, the introduction of any innovations, mainly in the education system, requires quite large material costs, which is very difficult to imagine in our republic at present, but it is obvious that you need to start somewhere.

According to the author, affordable steps in the field of reforming the higher education system and simple changes are already possible today, and since the main distinguishing parameters of each educational link are the content, methods and control, it is necessary to start with them, that is, the priority changes should concern precisely these areas.

The direction of the corresponding changes should be determined by modern technical capabilities and pedagogical approaches to education, according to which such an organization of the learning process is necessary (this also applies to school education), in which the teacher will become more of a consultant, and the student will become an actively thinking person who works independently, but under the management and control of the teacher, and the learning process itself - a joint activity to overcome emerging difficulties and problems.

The aim of the research is to identify available ways to fill, in accordance with the requirements of the time, some of the existing gaps in the higher education system and thereby increase its efficiency.

The relevance of this research is determined by the urgent need to modernize the educational process in universities, the specificity and ease of implementation of the changes proposed by the author.

The scientific novelty of the study lies in the fact that it introduces and substantiates some proposals-recommendations, the implementation of which will improve a lot in the shortest possible time and without additional material costs - two factors that, in our opinion, are very important today.

All provisions of the article are based on data obtained as a result of studying and analyzing the literature on the research problem; best practices, normative, educational and program documents in this area; generalization of theoretical and empirical material, which determines the theoretical and practical significance of the study.